

Ժամու, կոչելով զամենայն կամ զմեծ թիւ եպիսկոպոսաց իւրոց՝ ՚ի զանազան կողմանց:

Ընտրեալ յաթոռ կաթողիկոսութեան յամի հինգերորդի թագաւորութեանն Լեւոնի, միով ամաւ զկնի վախճանի նորին եւ ինքն հանգեաւ. զմեծ մասն ժամանակին՝ որպէս եւ յառաջ քան զկաթողիկոսութիւնն՝ կեցեալ համամիտ եւ գործակից թագաւորին, բայց միայն յամաց ինչ ՚ի միջոցին, յորս եղեւ գժտութիւն եւ հակառակութիւն մեծ ընդ նոսա. եւ Յովհան միայն կարաց եւ գիտաց կալ կանգուն եւ յանկմանն՝ ընդդէմ Լեւոնի, որպէս երբեմն սա ՚ի լինելն ընդ Բանիւ՝ ընդդէմ հակառակողացն. զի ըստ կոչմանն ընծայելոյ նմա՝ ունէր սիրտ, թերեւս առաւել իշխանական քան քահանայական. եւ ըստ պատմչին մերոյ, «էր այր խորագէտ եւ իմաստուն, եւ առատաձեռն. սեղանով արքայակերպ. եւ խոնարհ սրտիւ, եւ անպաճոյճ անձամբ, եւ ՚ի հոգեւորսն անփոյթ»²⁰³. զառաքինիս յոյժ սիրէր, եւ ոչ տայր թոյլ հրապարակել զվնասս կարգաւորաց: Շինասէր էր, եւ տան յարդարիչ եւ պիտոյից պատրաստիչ. որ եւ զբերդն Հռոմկլայն՝ քաջ ամրացոյց. (յոր սակս) քակեաց յեկեղեցական սպասուցն՝ բազում անօթս ոսկեղէնս եւ արծաթեղէնս. եւ զամենեսեան զեկեալսն առ ինքն բարիոք դարձոյց»²⁰⁴:

²⁰³ Ի հին օրինակի պատմչիս՝ ճարտարութեամբ ջնջեալ են երկիւղածք ոմանք, զբացասական մասնիկն *անփոյթ*:

²⁰⁴ Ցայս վայր հին օրինակ պատմչիս. իսկ որ յանուն Սմբատայ Գունդստապլի՝ գրէ յաւելուածով յականատեսէ, որ յայտ է թէ չէր ինքն Սմբատ, զի յայնժամ սակաւամեայ տղայ էր նա եւ ոչ ՚ի Հռոմկլայն. «Քակեաց (ասէ գրիչն, ընդ այլ սպասուց, եւ) զ*Պահարան* Սրբոցն՝ յոսկոյ եւ յարծաթոյ եւ յականց զարդարած, զոր Տէր Ներսէսն (Շնորհալի) յառաջ էր շինեալ, եւ յետոյ Տէր Գրիգոր Ապիրատն փարթամացոյց, եւ գրեց ՚ի վերայ գերկոքին անուանս. զմեծ *Խաչն* ոսկեղէն զՊարոն Վասլին՝ քակեաց, եւ հալեաց ձոյլ ոսկի սուրբ *Նշանն Գրիգորիսի*. եւ էառ ակունս եւ մարգարիտս շատ. քակեաց զոսկիազարմ *տուփ* աւետարանին Տէր Գրիգորիսի, որ էր ակամբ եւ մարգարտով. քակեաց զօքսինդ-սիդվլատ* նափորսն Տէր Ներսէսի, որ ձար ոսկով կարած էր, եւ զէտ ձոյլածոյտն կանգնէր. քակեաց զոսկին, եւ զքարինսն եւ զմարգարիտսն ՚ի *Գօտույ* սուրբ *սեղանին* զոր շինեալ էր Տէր Գրիգոր. էառ զմեծ *Լուսակալն արծաթի*՝ զոր շինեալ էր Տէր Գրիգորիս եւ կախեալ ՚ի գմբէթն Սուրբ Գրիգորի. քակեաց զ*Կամարսն* Տէր Գրիգորի, զոր շինեալ էր ոսկով եւ մարգարտով եւ ակամբք: Այլ մի՝ վասն գրելոյս մեզ մեղադրէք. զի չէ թէ ՚ի համբաւէ լուաք, այլ տեսաք եւ շօշափեցաք ՚ի քակելն՝ ձեռոք, եւ լացաք ընդ այն վայելչութեան անզարդ մնալն: Այլ զբերդն (Հռոմկլայ) շինութեամբ կարի ամրացոյց»:

* Յոյնք զպայծառութիւն երանգոց եւ մանաւանդ զծիրանւոյ՝ յայտնէին Օջէճ կամ Օջէճ քառիւ, ընդ որում զուգեալ եւ լատինական *պլադդա* (blatta), որ նշանակէ զորդան կարմիր, oxyblatta յայտ առնէ՝ զի յիշեալն եւ սխալագրեալ ՚ի պատմչէ մերմէ՝ էր պայծառափայլ ծիրանի թանձր ոսկէթել անկեալ: